ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2026 թվականի № 185-Ա

ՌՈՄԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի № 1550-Լ որոշման № 6 հավելվածի 19-րդ կետի 24-րդ ենթակետի և հիմք ընդունելով *Ռոման Մովսիսյանի*՝ 2026 թվականի մայիսի 7-ի № Ն/592-2026 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական ***Ռոման Ալբերտի Մովսիսյանին*** 2026 թվականի մայիսի 8-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել նրա գործավարությանը հանձնված նյութերի և օգտագործմանը տրամադրված գույքի հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժին)*՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի մայիսի 8
ք. Հրազդան